կանի երգը այնպէս տխուր էր այստեղ: Ո՞վ էր խլել նրա ուրախութիւնը: Ո՞վ էր կոտրել նրա սիրտը, որից լսւում էին այն ցաւալի հնչիւնները...

Երբ մօտեցանք, «հոնածը» իր մանգաղի ծայրը ցցեց մի կապած խուրձի մէջ եւ, վեր բարձրացնելով, բերեց եւ հասկերն ի վեր դրեց մեր առջեւ, ճանապարհի վրայ: Իսկ ինքը, արեւից այրոած դէմքը դէպի մեզ դարձնելով, լուռ կանգնեց իւր նոէրի մօտ: Կրօնաւորը հանեց քսակից մի արծաթի դրամ, ընծայեց նրան: «Հոնածը» շնորհակալութեամբ ընդունեց եւ այնքան կանգնեց, մինչեւ մենք անցանք:

— Եթէ դուք գիտենայիք, պարոն բժշկապետ, — դարձաւ նա դէպի Ասլանը, — թէ որքա՜ն բարի է այդ ժողովուրդը, որքա՜ն առաքինութիւններ, որքա՜ն նահապետական գեղեցիկ սովորութիւններ կան նրա մէջ: Ես կատարելապէս սիրահարոած եմ այդ ժողովրդի վրայ:

Յետոյ սկսեց մեզ բացատրել, թէ ինչ նշանակութիւն ունէր հնձաւորի այն խուրձը մեր առջեւ դնելը: Ասաց, դա մի սրբազան նոէր էր, որ մատուցանում էր նա իր մշակութեան բերքից:

— Օրինակ, այդ գիւղը, — առաջ տարաւ նա, — որ մի քանի ժամ առաջ անցանք, ես կատարելապէս հիացած եմ այդ գիւղացոց բարք ու վարքով: Ամէն անգամ, որ պատահում է այնտեղ գնալ, հաւաքւում են իմ շուրջը, ես հոգեւորապէս մխիթարում եմ նրանց, եւ նրանք ուրախութիւնից չգիտեն՝ թէ ինչ անեն. իմ ձեռքերն են համբուրում, եւ մինչեւ անգամ հագուստի դրօշակներն են համբուրում: Տեսնո՞ւմ էք, պարոն բժշկապետ, որքա՜ն պարզութիւն, որքա՜ն անմեղութիւն...

Խօսքը Հացիկի «կարճազատների» մասին էր:

Ասլանը հարցրեց.

— Շա՞տ հետեւողներ ունէք այնտեղ:

— Այժմ մի քանի ընտանիք միայն: Բայց մեծ յոյս ունեմ, որ շուտով իմ հետեւողների թիւը կաւելանայ:

— Իսկ միւս գիւղերո՞ւմ:

— Երեք գիւղ, Նորաշէն, Օղունք, Առինչ, ամբողջապէս կաթոլիկ են: Իսկ միւս գիւղերում դեռ նոր է մուտք գործում կաթոլիկութիւնը: Մենք շատ ժամանակ չէ, որ այդ կողմերը եկած ենք, պարոն բժշկապետ: Մեզանից առաջ գործում էին այստեղ բոլորովին այլ ուխտի կրօնաւորներ:

Մօտենալով Մեղրի գետի եզերքին, տեսարանը փոխուեցաւ: Ոսկեգոյն արտերի փոխարէն սկսուեցան կանաչազարդ մարգագետիններ, որ գետի